Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ն տրամադրում է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում:

ԱՄՆ բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարություն
Բնակարանային շինարարության վարչություն Բազմաընտանիք բնակարանային շինարարության ծրագրեր

ԿԱՐՃԱԿԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

EIV-ն և Դուք

ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ԴՈՒՔ ինչ պետք է իմանաք,
եթե դուք դիմում եք կամ ստանում եք
վարձավճարի օգնություն՝ Բնակարանային շինարարության և քաղաքային զարգացման նախարարության (HUD) միջոցով

Ի՞նչ է EIV-ն:

EIV-ն դա Ինտերնետային տեխնոլոգիայիաների վրա հիմնված համակարգչային ծրագիր է, որը պարունակում է HUD-ի վարձակալական բնակարանային ֆոնդի օգնության ծրագրերում մասնակցող անհատների զբաղվածության և եկամուտի մասին տեղեկատվություն: Այդ տեղեկատվությունն օգնում է HUD-ին երաշխավորելու, որ «ճիշտ նպաստները հասնեն ճիշտ մարդկանց»:

Եկամուտի մասին ի՞նչ տեղեկատվություն է EIV-ում և որտեղի՞ց է այն առաջանում:

Սոցիակալան ապահովության վարչություն.
Սոցիալական ապահավության նպաստներ
Լրացուցիչ սոցիալական եկամուտի նպաստներ
Երկակի իրավունքի SS նպաստներ

Առողջապահության և մարդկային ծառայությունների նախարարության Նոր վարձումների տեղեկատու:
Աշխատավարձեր
Գործազրկության փոխհատուցում
Նոր վարձում (W-4)

Ի՞նչի համար է օգտագործվում EIV-ի տեղեկատվությունը

EIV-ի համակարգողը ձեր ապրած գույքի սեփականատիրոջը և/կամ կառավարչին տրամադրում է ձեր եկամուտի և աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկատվություն: Այդ տեղեկատվությունն օգտագործվում է ձեր զբաղվածության և/կամ եկամուտի անկախ ստուգման հետ կապված HUD-ի պահանջին բավարարելու համար, երբ դուք անցնում եք կրկնակի ատեստավորում վարձավճարի հետ կապված օգնությունը շարունակելու համար: EIV-ի համակարգից տեղեկատվություն ստանալը ավելի ճշգրիտ և նվազ ժամանակատար և ծախսատար է սեփականատիրոջ կամ կառավարչի համար, քան ստուգելու նպատակով ձեր եկամուտի աղբյուրին ուղղակիորեն դիմելը:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ն տրամադրում է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում:

Գույքի սեփականատերերը և կառավարիչները կարող են օգտագործել EIV-ի համակարգը որոշելու, թե արդյոք դուք.

- ճշգրիտ եք ներկայացրել ձեր եկամուտի մասին հաշվետվությունը

Նրանք նաև կարողանալու են որոշել, թե արդյոք դուք.

Օգտագործել եք սոցիալական ապահովության կեղծ համար
Չեք ներկայացրել կամ թերի եք ներկայացրել ձեր ամուսնու (կնոջ) կամ տնային տնտեսության այլ անդամի եկամուտը
Ստանում եք վարձավճարի օգնություն այլ գույքի հետ կապված

Արդյոք իմ համաձայնությունը պարտադի՞ր է EIV-ից տեղեկատվություն ստանալու համար:

Այո: Երբ դուք ստորագրում եք «Տեղեկատվություն տալու համար համաձայնություն և ծանուցում» HUD-9887 ձևաթուղթը և «Տեղեկատվություն տալու դիմողի/վարձակալի համաձայնություն և ծանուցում» HUD-9887-A ձևաթուղթը, ապա դուք տալիս եք ձեր համաձայնությունը HUD-ին և գույքի սեփականատիրոջը կամ կառավարչին՝ ստանալու տեղեկատվություն ձեր եկամուտի և/կամ զբաղվածության վերաբերյալ և որոշելու HUD-ի վարձավճարի օգնության նկատմամբ ձեր իրավասությունը: Ձեր կողմից համաձայնության ձևաթղթերի չստորագրելը կարող է հանգեցնել օգնության մերժմանը կամ բնակարանային օգնությամբ ընդգրկված նպատակների դադարեցմանը:

Ո՞վ ունի մուտք EIV-ի տեղեկատվության նկատմամբ:

Միայն դուք և HUD-9887 համաձայնության ձևաթղթում նշված մարդիկ ունեն մուտք ձեզ վերաբերող EIV-ի տեղեկատվության նկատմամբ:

Որո՞նք են պարտավորությունները:

Որպես HUD-ի կողմից օժանդակվող գույքի վարձակալ դուք պետք է հաստատեք, որ բնակարանային օգնության համար դիմումի մեջ ներկայացված տեղեկատվությունը և ձեր օգնությունը ատեստավորելու և կրկնակի ատեստավորելու համար օգտագործված ձևաթուղթը (ձևաթուղթ HUD-50059) ճշգրիտ է և ազնիվ: Դա նաև նկարագրված է *Վարձակալի իրավունքները և պարտավորությունները* գրքույկում, որն ամեն տարի ձեզ պարտավոր է տալ ձեր գույքի սեփականատերը կամ կառավարիչը:

Տուժանքներ կեղծ տեղեկատվություն տրամադրելու համար

Կեղծ տեղեկատվություն տրամադրելը խարդախություն է: Խարդախություն գործած անձանց տուժանքները ներ են առնում վտարումը, ստացված գերավճարված օգնության ետ վճարումը, մինչև $10.000 տուգանքը, մինչև 5 տարով ազատազրկումը, ապագայում վարձավճարի օգնություն ստանալու արգելումը և/կամ նահանգային կամ տեղական կառավարության տուժանքները:

Պաշտպանվե՛ք, հետևե՛ք HUD-ի հաշվետվության պահանջներին

Դիմումները և կրկնակի ատեստավորումները անցնելիս, դուք պետք է ներառեք ձեր կամ ձեր ընտանիքի անդամների կողմից ստացվող եկամուտի բոլոր աղբյուրները: Որոշ աղբյուրները ներ են առնում.

Եկամուտը աշխատավարձից
Սոցիալական ապահովության վճարները
Գործազրկության նպաստները
Սոցիալական ապահովության կամ Լրացուցիչ սոցիալական եկամուտի նպաստները
Վետերանների նպաստները
Կենսաթոշակները, կենսաթոշակի անցնելը և այլն
Եկամուտը ակտիվներից

Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ն տրամադրում է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում:

Երեխայի անունից ստացվող փողերը, ինչպիսիք են.

- *Երեխայի օգնությունը*
- *AFDC-ի վճարները*
- *Սոցիալական ապահովությունը երեխայի համար և այլն*

Եթե ունեք հարցեր, թե արդյոք ստացված փողը պետք է հաշվվի որպես եկամուտ, ապա տվե՛ք դրանք ձեր գույքի սեփականատիրոջը կամ կառավարչին:

Ձեր տնային տնտեսության եկամուտում կամ ընտանիքի կազմում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում անմիջապես դիմե՛ք ձեր գույքի սեփականատիրոջը կամ կառավարչին՝ պարզելու, թե արդյոք դա ազդելու է ձեր վարձավճարի օգնության վրա:

Ձեր գույքի սեփականատերից կամ կառավարչից պահանջվում է տրամադրել ձեզ «Ինչպե՞ս է որոշվում ձեր վարձավճարը» ազդագիրը, որը պարունակում է, թե ինչն է ընդգրկվում կամ չի ընդգրկվում եկամուտի մեջ:

Ի՞նչ եթե ես համաձայն չեն EIV-ի տեղեկատվությանը:

Եթե դուք համաձայն չեք զբաղվածության և/կամ եկամուտի վերաբերյալ տեղեկատվությանը EIV-ում, ապա դուք պետք է հայտնեք ձեր գույքի սեփականատիրոջը կամ կառավարչին: Ձեր գույքի սեփականատերը կամ կառավարիչը՝ ուղղակի դիմելով եկամուտի աղբյուրին, ստանալու է զբաղվածության և/կամ եկամուտի աղբյուրի վերաբերյալ այն տեղեկատվության ճշգրտում, որի հետ դուք համաձայն չեք: Գույքի սեփականատիրոջ կամ կառավարչի կողմից եկամուտի աղբյուրից տեղեկատվություն ստանալուց հետո դուք գրավոր տեղեկացվելու եք արդյունքների մասին:

Ի՞նչ եթե ես նախկինում չեմ ներկայացրել եկամուտը և այն հիմա ներկայացվում է EIV-ում:

Եթե EIV-ի հաշվետվությունը հայտնի է դարձնում նախորդ ժամանակամիջոցի եկամուտը, որը դուք չեք ներկայացրել հաշվետվությամբ, ապա դուք ունեք երկու տարբերակ. 1) դուք կարող եք համաձայնել EIV-ի հաշվետվությանը, եթե այն ճիշտ է կամ 2) դուք կարող եք վիճարկել հաշվետվությունը, եթե, ձեր կարծիքով, այն ճիշտ չէ: Գույքի սեփականատերը կամ կառավարիչը այնուհետև անցկացնելու է երրորդ կողմի գրավոր ճշտում եկամուտի հաշվետու աղբյուրի հետ: Եթե աղբյուրը հաստատի, որ եկամուտը ճշգրիտ է, ապա ձեզանից պահանջվելու է ետ վճարել ամբողջ գերավճարված վարձավճարի օգնությունը վերջին հինգ (5) տարվա համար և դուք կարող եք ենթարկվել տուժանքների, եթե պարզվի, որ դուք դիտավորյալ եք փորձել թաքցնել ձեր եկամուտը:

Ի՞նչ եթե EIV-ի տեղեկատվությունը իմ մասին չէ:

EIV-ն ունի կարողություն բացահայտելու «անձի գողության» հավանական դեպքերը՝ ինչ-որ մեկի կողմից ձեր սոցիալական ապահովության համարը օգտագործելու պարագայում: Դա բացահայտելու դեպքում, դուք պետք է տեղեկացնեք Սոցիալական ապահովության վարչությանը՝ զանգահարելով նրանց 1-800-772-1213 անվճար հեռախոսահամարով: «Անձի գողության» հետագա տեղեկատվությունը զետեղված է Սոցիալական ապահովության վարչության կայքէջում՝http://www.ssa.gov/pubs/10064.html:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է HUD–ի կողմից տրված իրավական փաստաթղթի թարգմանություն: HUD–ն տրամադրում է սույն թարգմանությունը ձեզ պարզապես հարմարության համար, որպեսզի դուք հասկանաք ձեր իրավունքները և պարտականությունները: Սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է պաշտոնական, իրավական և հսկող փաստաթուղթ: Սույն թարգմանված փաստաթուղթը պաշտոնական փաստաթուղթ չի հանդիսանում:

Ես ո՞ւմ պետք է դիմեմ, եթե իմ եկամուտը կամ վարձավճարի օգնությունը ճշգրիտ չի հարվարկված:

Նախ, բացատրության համար դիմե՛ք ձեր գույքի սեփականատիրոջը կամ կառավարչին:

Եթե ձեզ հարկավոր է հետագա օգնություն, ապա դուք կարող եք դիմել ձեր ապրած գույքի ադմինիստրատորին և, եթե լուծումը ձեզ չի գոհացնում, ապա դուք կարող եք դիմել HUD-ին: Ձեզ մոտակա HUD-ի գրասենյակի գտնվելու վայրը ճշտելու համար, որը նաև կարող է ձեզ տրամադրել տեղեկատվություն պայմանագրային ադմինիստրատորի մասին տեղեկատվությամբ, խնդրվում է զանգահարել Բազմաընտանիք բնակարանային ֆոնդի հաշվիչ պալատին՝ 1-800-685-8470 հեռախոսահամարով:

Ես որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկատվություն EIV-ի և եկամուտի ստուգման գործընթացի մասին:

Ձեր գույքի սեփականատերը կամ կառավարիչը կարող է ձեզ տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն EIV-ի և եկամուտի ստուգման գործընթացի վերաբերյալ: Լրացուցիչ տեղեկատվության համար նրանք կարող են ձեզ հղել նաև պայմանագրային ադմինիստրատորին կամ HUD-ի ձեր տեղական գրասենյակ:

Եթե դուք ունեք համակարգչի մուտք, ապա կարող եք ավելին կարդալ EIV-ի և եկամուտի ստուգման գործընթացի վերաբերյալ HUD-ի Բազմաընտանիք EIV-ի բազային կայքէջի վրա՝ www.hud.gov/offices/hsg/mfh/rhiip/eiv/eivhome.cfm: